

# ԽՍՀՄ ԳԻՒԺՈՂԿՈՄԱՏ

ԽՈՀՄ ՊԵՏԱՊԱՇՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

368

3-99

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 214|46

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՇԵՆՔԵՐԻ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

1939 թ. ապրիլի 11-ին

ԸՆԴԾԱՌԱՐԱՐ ՀԱՐՑԵՐ

§ 1. Գնահատման յենթակա յեն գյուղական վայրերում դըստ նըվող այն բնակելի և տնտեսական շենքերը, վորոնք անձնական սեփականության իրավունքով պատկանում են ԽՍՀ Միության քաղաքացիներին:

Այն վայրերում, ուր չենքերի պարտադիր կողարային առաջազովագրություն չի անցկացված, այնտեղ չենքերի գնահատում չի կատարվում:

§ 2. Շենքերի գնահատումը կատարվում է յուրաքանչյուր ապահովագրված շենքի ապահովագրական դումարը վորոշելու համար:

§ 3. Շենքերի գնահատումը կատարվում է բատ շինությունների իրական արժեքի, կիրառելով գնահատու նորմաները, այսինքն՝ դուրս դարձով մաշվածության դեղը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ,

§ 4. Գնահատման նորմաներ սահմանվում են, յելնելով նոր շենքի 1 խորանարդ մետրի (խորանարդ նորմայի) կամ նրա հիմքի տարածության 1 քառ. մետրի (մակերեսային նորմայի) արժեքից:

§ 5. Յուրաքանչյուր շրջանի համար գնահատման նորմաների նախադիմքը մշակվում է Պետապի մարզային (յերկրային, ԱԽՍՀ) վարչությունների, իսկ մարզային (յերկրային) բաժանումն չունեցող միութենական հանրապետություններում՝ այդ հանրապետությունների Պետապի վարչությունների կողմից:



2569

40

24092-60

Պետապի վարչությունները կարող են դնահատման նորմանեաւի կազմումը հանձնարարել Պետապի շրջանային տեսչություններին, յեթէ այդ աշխատանքները կատարելու համար, նրանց կազմի մեջ ձեռնահաս անձնավորություններ կան:

Այդպիսի գեղագերում Պետապի շրջանային տեսչությունները դնահատման նորմաները մշակում են շրջանային տեխնիկ-շինարարի պարտադիր մասնակցությամբ:

§ 6. Շրջանային ապահովագրական տեսչությունները Պետապի համապատասխան վարչություններին ներկայացնում են տիպիկ չենքերի մանրամասն նկարագրություն և տեղեկություններ շինանյութերի գների, շինանյութերի փոխադրման միջին տարածության և նրանց փոխադրման արժեքի վերաբերյալ:

Այդ տեղեկությունները հավաքվում են շրջանային ապահովագրական տեսչությունների կողմից՝ շրջանային տեխնիկի հետ միասին, վավերացվում են շրջալանի կողմից և մտցվում են շրջգործիքի նախագահություն՝ քննելու համար:

§ 7. Տվյալ շրջանում տիպիկ չենքեր կառուցելու համար Պետապի վարչության կողմից մշակված (§5) գնահատու նորմաների նախագիծը սակագների և նախահաշիվների հետ միասին ուղարկ։ Վում և Պետապի տեսչությանը, վորն այդպիսին մտցնում և շրջանային գործադիր կոմիտեյի նախագահություն՝ քննության համար։

Շրջանային գործադիր կոմիտեյի նախագահության յեղակացությունն ուղարկվում և Պետապի մարզային (յերկրային, ԱԽՍՀ) վարչությանը, իսկ մարզային (յերկրային) բաժանում շունեցող հանրապետությունների նկատմամբ՝ միութենական հանրապետության Պետապի վարչությանը։ Պետապի մատնաշված վարչությունները գնահատման նորմաների նախագիծը ներկայացնում են մարզային (յերկրային) գործկոմներին, ԱԽՍՀ ժողկոմիորհներին, իսկ մարզային (յերկրային) բաժանում շունեցող միութենական հանրապետություններում, միութենական հանրապետությունների ժողկոմներին ի հաստատություն։

§ 8. Գնահատման նորմաները մշակվում են, յենելով տիպիկ չենքերի արժեքից։ Տիպիկ չենք և համարվում այն չենքը, վորն իր պատերի և տանիքի նյութերով, չափով, կառուցված-

չափ, ներքին չինվածքով, չինանյութերի և յերեսապատման վորակով ավելի շատ և տարածված տվյալ վայրում։

Տիպիկ չենքերը պետք են վորոշվեն ըստ նրանց յուրաքանչյուրի տնտեսական նշանակության (բնակելի տուն, բակ, ամբար, ախոռ, բաղնիք և այլն)։

§ 9. Տիպիկ չենքերը պետք են վորոշվեն ապահովագրական տեսչությունների կողմից՝ շրջանային տեխնիկ-շինարարի հետ միասին, շինարարության տեղական պայմանները մանրամասն ուսումնասիրելու միջոցով։

Ապահովագրական տեսչությունները տեղում վորոշում են, թե տիպիկ չենքերն ինչպիսի նյութերից են կառուցվում, ինչ վորակի շինանյութ և գործադրվում, պարզում են շինարարական աշխատնքների վորակը և այլն։

Որինակ՝ Տիպիկ բնակելի չենքը վորոշելու համար, պետք են պարզել շինությունը բնութագրող հետեւյալ ավելի եյական հատկանիշները՝ տան չափերն ըստ արտաքին չափումների, ինչպիսին ե տան հիմքը (փայտյա կամ աղյուսի սյուներ, աղյուսի տոկու և այլն), ինչ նյութերից են շինված պատերը, հաստությունը, կտուրի, հաստկի կառուցվածքը, ինչպիսի վառարաններ են և ինչ հիմքի վրա յեն նրանք կառուցված, ինչպիսին ե արտաքին և ներքին յերեսապատումը և այլն։ Յուրաքանչյուր տիպիկ չենքի տեսակի համար պետք ե կազմել մանրամասն նկարողություն և պլան (եսկիզ), յուրյա տալով չափերը։

Տիպիկ չենքի նկարագրությունն իր մեջ պետք ե պարունակի շինության բոլոր ելեմենտները։

§ 10. Շինանյութերի նկատմամբ զների տեղեկագրերը կազմում ե ապահովագրական տեսչությունը՝ շրջանային տեխնիկ-շինարարի հետ միասին, հետեւյալ տվյալների հիման վրա՝

ա) Տվյալ վայրի համար սահմանված շինանյութերի պետական պլանային գները, բացի սույն պարագրաֆի «ը» կետում մատնանշվածներից։

բ) Տեղեկություններ այն նյութերի արժեքի մասին, վորոշ հայթհայթումն ավելի ձեռնտու յե (ավելի եժան ե) նրանց մշակման վայրերում քան առելվարական կազմակերպությունների, բաղաներում (որինակ՝ մշտական անտառային տնտեսության չինափայտը, մոտակատ աղյուսի գործարանի աղյուսը, անտա-

ռամբայա, վորը ձեւք և բերդած արմատում աղսցված և տափ-  
տակի յե վերածված սպասողի ուժերով և այլն):

Այնպիսի տեղական նյութերի գները, ինչպիսիք են՝ կավը,  
ավաղը, քարը և այլն, պետք է վորոշէլ յենելով նրանց մշակ-  
ման և հայթհայթման արժեքից:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր բարձրացված (հակառակ  
ավաղը վայրում փաստորեն գոյություն ունեցող) գները կառա-  
ջացնեն զնահատման նորմաների արհետական բարձրացում,  
հետևապես և շենքերի գնահատումների բարձրացում:

§ 11. Գների վերաբերյալ տեղեկությունները հավաքվում  
են միայն այն շինանյութի վերաբերյալ, վորն ուժագործվում  
է տիպիկ շենքերի կառուցման ժամանակ, այլև մյուս այն շի-  
նանյութերի նկատմամբ, վորոնք գործադրվում են դյուզական  
վայրերում այլ (վոչ տիպիկ) շինություններ կառուցելիս:

§ 12. Շինանյութերի գներին պետք է ավելացնել այն ծափ-  
սերը, վորոնք վերաբերում են նյութերը հայթայթման վայրից  
մինչ կառուցման վայրը փոխադրելուն: Այդ ծախսերը պետք է  
հաշվի առնել ըստ նրանց փաստացի գների, սակայն բարձր չը-  
պետք է լինեն նյութերի փոխադրման պետական գներից:

Քանի վոր շինանյութերի գնման կետի և շենքի կառուցման  
վայրի մեջ յեղած տարածությունը տարբեր է, ուստի նյութերի  
փոխադրման ծախսը պետք է հաշվել, յենելով ավյալ վայրի  
(չըլանի կամ նրա մասի) միջին տարածությունից:

§ 13. Շինանյութերի և նրանց փոխադրման նկատմամբ գների  
վերաբերյալ տեղեկությունները պետք է մտյնել տեղեկատու-  
գների տեղեկադրում (տես որինակելի ձեվը № 1 հավելվածը):

§ 4. Յեթե ըրջանի տերիտորիայում շինանյութերի փոխա-  
դրման արժեքը միատեսակ կլինի, այդ դեպքում տեղեկատու-  
գների տեղեկադրում միևնույն տեսակի շինանյութերի փոխա-  
դրման համար պետք է ցույց տալ յերկու և ավելի գներ, յել-  
նելով ըրջանի տվյալ մասի միջին տարածությունից:

§ 15. Գնահատման նորմաները պետք են մշակվեն Պետակի  
համապատասխան վարչությունների կողմից հետևյալ տվյալ-  
ների հիման վրա՝

ա) ըրջանային ապահովագրական տեսչությունների կողմից  
կազմված և ըրջործկոմների նախադասկությունների կողմից

քննության յենթարկված տիպիկ շենքերի ցուցակը և նկարա-  
դրությունը (եսկիզներով—գծադրերով).

բ) ԽՍՀՄ ԺԿԽ կողմից 1937 թ. նոյեմբերի 29-ին հաստա-  
ված շինարարական աշխատանքների համար գործածության  
մեջ յեղած նախահաշվային նորմաները՝ «Խոշորացված նախա-  
հաշվային նորմաների տեղեկատու», ԽՍՀՄ ԺԿԽ կից շինարա-  
րարական գործերի կոմիտեի կողմից 1938 թ. մայիսի 31-ին  
հաստատված «Բանութիւն և մինչ 100.000 ռուբլու արժեքի շինա-  
րարության որյեկտների համար նյութեղենի ծախսերի խոչու-  
րացված ցուցանիշների տեղեկատու», վորը կիրառվելու յե նա-  
խահաշվային-Փինանսական հաշվարկներ կազմելու ժամանակ,  
«Դյուզատնտեսական շենքերի և կառուցումների շինարարու-  
թյան աշխատանքների նախահաշվային տեղեկատու» 1937 թ.  
ԳՅՈՒՆՏՆՑՊՐՈՅՅԵԿՏԻ հրատարակության և այլ պաշտոնական  
տեղեկատուներ:

գ) Շրջգործկոմի նախագահության կողմից քննության յեն-  
թարկված շինանյութերի վերաբերյալ տեղեկատու գների տեղե-  
կադրերը (հաշվելով նրանց փոխադրման արժեքը):

դ) Շինարարական բանվորների համար գործող բանութիւ-  
նարիֆային ցանցի վերաբերյալ ավյաները (առանց հավելում-  
ների):

§ 16. Պետակի մարզային, յերկրային, ԱԽՍՀ վարչություն-  
ները, իսկ մարզային (յերկրային) բաժանում ցունեցող միութե-  
անեկան հանրապետություններում Պետակի այդ հանրապետու-  
թյունների վարչությունները կազմում են՝

ա) ՇինԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՋՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ  
ՆԿԱՏՄԱՆ ԱՌԱՋՆՁԻՆ ԳՆԱՀԱՏԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ—ՅԱՀԱՅԱԿԱՆ բա-  
րեկան պահանջման համար աշխատանքների տեսակների  
նկատմամբ, վորոնք հանդիսանալով տիպիկ շենքի ելեմենտներ,  
մտնում են այլ շինությունների (վոչ տիպիկ) կազմի մեջ (որի-  
նակ՝ պատերը ներսից սվաղելը, հատակը ներկելը և այլն):

բ) Յուրաքանչյուր տիպիկ շենքի տեխնիկական նախահաշվ-  
վով, յենելով տիպիկ շենքերի առանձին ելեմենտների քանակից  
և առանձին գնահատումներից (տես որինակելի ձեվը № 3 հա-  
վելվածը):

ՑԱՆՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ... ՏԵԽՆԻԿԱԿԱՆ նախահաշվիվ կազմե-

Աս՝ անհրաժեշտ է հաշվի առնել առանձին դնահատումների մեջ նախատեսնված նյութերի քանակի ու վորակի տարբերությունը և փաստորեն գործադրվող նյութերի քանակի ու վորակի միջև յեղած տարբերությունը, շինության նկարագրությունների համաձայն։

§ 17. Յուրաքանչյուր տվյալ շրջանի տիպիկ շենքերի նախահաշվիները և առանձին դնահատումներն ուղարկվում են համապատասխան շրջադիմեցությանը՝ շենքերի դնահատման և մնաների լուծարքի ժամանակ նրանցով զեկավարվելու համար։

§ 18. Ամբողջ շենքի արժեքը խորանարդ մետրերի քանակի վրա բաժանելով վորոշվում են նրա ծավալի 1 խոր.մետրի վրա ընկնող շինության արժեքը։

Այդ մեծությունն ել կհանդիսանա դնահատման խորանարդի (ծավալի) նորման։

Շինության (կամ նրա հիմքի տարածության խորանարդի (ծավալի)) հաշվարկումը կատարվում է ըստ նրա արտաքին չափերի, ընդ վորում յերկարությունը և լայնությունն ընդունվում են անկյունների հետ միասին, իսկ բարձրության համար ընդունվում է պատերի փաստացի յերկարությունը, զերանակազ պատերինը՝ սյուների ցածի պատից մինչև վերեինը, աղյուսի, քարե, զարմանի, կավակերտ պատերինը՝ դետնից մինչև պատի վերին կտրվածքը։

§ 19. Տեխնիկական նախահաշվի «տոկոսային» հարաբերությունը գումարի նկատմամբ» սյունյակում հաշվարկվում է շենքի յուրաքանչյուր մասի արժեքի տոկոսային հարաբերությունն ամբողջ շենքի նկատմամբ այսինքն՝ վորոշվում է, թե շենքի արժեքի վոր մասն և ընկնում հիմքի պատերի, հատակի, առաստաղի վրա և այլն։

§ 20. Խորանարդային (ծավալային) նորմաները կաղմվում են ինչպես բնակելի շենքերի դնահատումների, նույնպես և այնպիսի տնականական շենքերի համար ինչպիսիք են ամբարները, բաղնիքները, զերանակազ պահեստները և այլն, իսկ այնպիսի տնականական շենքերի, ինչպիսիք են բակերը, շվաքարանները (նալես) հյուսվածաշեն և նրբատաշ պահեստները (սարայներ) և այլն, դրանց դնահատումները հաշվարկվում են ըստ մակերեսային նորմաների։

Որինակ՝ հյուսվածքաշեն պահեստի ընդհանուր արժեքը բա-

ժանվում ե նրա հիմքի տարածության քառ. մետրերի քանակի վրա։

§ 21. Մշակված դնահատման նորմաներից ոգտվելու հարժարության համար կաղմվում է տվյալ շրջանի կամ նրա մի մասի համար «գյուղական վայրերում տվյալիկ շենքերը դնահատման նորմաների ընդհանուր ամփոփադիր»։

§ 22. Այն գեղղքում, յերբ շրջանի տերիտորիայում դդալի տարբերություն կա շինանյութերի և նրանց փոխադրման գների միջև, առանձին դնացրացական գների և նախահաշվիների մեջ մացքում են լրացուցիչ սյունյակներ, վորոնցով աշխատանքների տվյալ ելեմնենտները գնահատվում են ուրիշ գների համապատասխան։

§ 23. Գնահատման նորմաները կարող են կիրառվել միայն ավտոնոմ հանրապետությունների ֆողկոմիտունների, մարզային (յերկրային) գործկոմների, իսկ մարզային (յերկրային) բաժանում չունեցող հանրապետություններում՝ այդ հանրապետությունների ժողկոմիտունների կողմից հաստատվելուց հետո։

ՇԵՆՔԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆԲՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

§ 24. Պետապի համապատասխան վարչության պլանային առաջադրանքների հիման վրա շրջանային ապահովագրական տեսչությունների կողմից կաղմվում է շենքերի դնահատումների անցկացնելու աշխատանքների ծրագրի։ Ծրագրի մեջ պետք է ցույց տալ՝

ա) Այն բնակեցման կետերի անունները, ուր տվյալ տարրում պետք է կատարվի շինությունների գնահատում։

բ) Այդ յուրաքանչյուրի գյուղի տնտեսությունների քանակը։

գ) Նախորդ գնահատումն անցկացրած տեսրին։

դ) Շենքերի գնահատման աշխատանքներն սկսելու և վերջացնելու ժամկետները։

յե) Ուժ կողմից է կատարվելու շենքերի գնահատումը։

Շենքերի գնահատման ծրագրի մեջ առաջին հերթին պետք է մացնել՝

ա) Այն գյուղերը, վորոնց նկատմամբ ապահովագրական թերթիներ չկան։

բ) Այն գյուղերը, վորոնց տնտեսություններն ունեն ավելի հնացած, վոչ ճիշտ գնահատումներ։

Վերազնահատման աշխատանքներն անցկացնելու ծրագրը

պետք և մոցնել շրջանային գործադիր կոմիտեի նախագահությունը՝ հաստատելու համար:

§ 25. Շենքերի գնահատումը պետք և կստարեն ավագ կամ յեթաշրջանային ապահովագրական տեսուչները՝ անպայման դյուղաբորհրդի ներկայացուցչի և շենքի տիրոջ կամ նրա ընտանիքի չափահաս անդամի ներկայությամբ:

Սուանձին դեպքերում Պետապի մարզային (յերկրային, ՍԽԱՀ) վարչության թույլատվությամբ, շենքերի գնահատման աշխատանքների կատարումը կարելի յէ հանձնարարել շրջանային տեխնիկ-շինարարին կամ հատուկ պատրաստականություն ունեցող այլ անձնավորության:

Այդպիսի անձանց աշխատանքի վրակի համար պատասխանատվությունը կրում է ապահովագրական ավագ տեսուչը:

§ 26. Գնահատման աշխատանքներն անցկացնելուց առաջ, յուրաքանչյուր դյուլում ապահովագրական տեսուչները, դյուլական խորհուրդի թույլատվությամբ, հրավիրում են ապահովագրվողների ընդհանուր ժողով, շենքելի գնահատման աշխատանքների նպատակների ու խնդիրների մասին զեկուցում դընելու համար:

ԲԱԿԵՐԻ ՈՒ ՇԵՆՔԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 27. Այն շենքերը, վորոնք պատկանում են մեկ տիրոջ, պետք և գրանցվեն մի ապահովագրական գնահատման թերթիկում անկախ նրանից. թե ինչ վայրում են նրանք գտնվում, մատնաշելով ապահովագրական թերթիկում, թե վոր վայրում ե գտնվում շենքը:

Այն շենքերը, վորոնք գտնվում են մի քանի անձանց (տընտեսությունների) ընդհանուր տիրապետության տակ, պետք է գրանցվեն մեկ ապահովագրական գնահատման թերթիկում տալով նրա մեջ բոլոր համատերերին: Այսպիսի ապահովագրական գնահատման թերթիկը պետք է ունենա ինքնուրույն համար:

§ 28. Յեթե բնակելի կամ վոչ բնակելի շենքերը պատկանում են մաս-մաս ( $\frac{1}{2}, \frac{1}{3}$  և այլն) մի քանի անձնավորությունների, այդ դեպքում այդ շենքերի մասերը պետք է գրանցվեն գնահատման առանձին-առանձին համարություններին և յուրաքանչյուր տիրոջ նկատ-

մամբ պետք և կազմվեն հատուկ ապահովագրական գնահատման թերթիկը: Այն դեպքում, յերբ շահակիցն ունի այլ չենք, այդ դեպքում վերը ցույց տրված շինության մասը պետք է գրանցել ովյալ տնտեսության հիմնական ապահովագրական թերթիկում:

§ 29. Այն շենքերը, վորոնք գնահատման աշխատանքները կատարելու մոմենտին չեն ավարտված, պետք և գրանցվեն և գնահատվեն, յեթե նրանք մինչ այդ ժամկետն արդեն կանգնեցված են մշտական տեղում և ունեն պատեր ու կտորը:

Այդպիսի շենքերի արժեքը պետք է վորոշել նրանց կատարված կառուցման աշխատանքների աստիճանի համեմատ: Այդպիսի վեպքում ապահովագրական գնահատման թերթիկներում պետք է նշել, վոր շենքի կառուցումը չի ավարտված: Այդպիսի շինությունները կառուցվելուն պես յենթակա յեն վերադաշտման:

§ 30. Անբնակելի և վորյեվե մեկի կողմից չպաշտպանվող շենքերը հաշվի յեն առնվում և գնահատվում են: Նման դեպքում ապահովագրական գնահատման թերթիկներում պետք է նշվեն, վոր տվյալ տնտեսության շինությունները հանդիսանում են անբնակելի և անպաշտպան:

§ 31. Այն շենքերը, վորոնք կատված են այլ շինությունների հետ կամ նրանց հարակից են, համարվում են առանձին, յեթե նրանք ունեն հատուկ անտեսական նշանակություն:

Հաշտերը (նախառենյակները), գարբանները և փայտյացները պատկաները պետք է հաշվի առնվեն և գնահատվեն առանձին:

§ 32. Կից մանր կառուցումները (արտաքին սանդուխքը, բաց պատշտամը և այլն), վորպես առանձին շենք չեն համարվում և գրանցվում են վորպես այն հիմնական շինության տանձին մասեր, վորին նրանք հարակից են (որինակ՝ հաշտապաքին սանդուխքի հետ):

§ 33. Գրանցվում, բայց չեն գնահատվում հետեւյալ շենքերը՝ ա) Խարխուլ կամ քանդված, հետեւապես և վոչ մի տնտեսական նշանակություն չունեցողները:

բ) Այն բնակելի շենքերը, վորոնք գետնի մակարդակի վրա պատեր չունեն (դետնափոր տները):

Նման դեպքում ապահովագրական գնահատման թերթիկ-

Ներսում մատնանշվում է, թե ինչու տվյալ շենքը յենթակա չէ պարագագիր կուպարային առաջնովագրության:

§ 34. Առահովագրական դնահատման յուրաքանչյուր թերթիկ պետք է համարակալված լինի: Թերթիկների համարակալումը պետք է տանել այն կարգով, ինչ կարգով կազմվել են դյուդական խորհուրդների տնտեսական դրգերը (բայց բակերի համարները կարող են և չզուգադիմել գյուղական խորհրդի տնտեսական դրգեր տնտեսությունների համարներին):

### ՇԵՆՔԵՐԻ ԳՆԱՀԱՏՄՈՒՄԸ

§ 35. Յուրաքանչյուր շենք դնահատելիս սահմանվում և առահովագրական դնահատման թերթիկում դրանցվում են հետեւյալ տվյալները՝

1) Շինության կառուցման տարեթիվը:

2) Շենքի նշանակությունը (բնակելի տուն, բակ, ոլուճեստ, սժբար, կալսարան և այլն):

3) Պատերի և կտորների նյութը (դերանակասղ, գարմանով ծածկված, աղյուսածածկի, յերկաթապատ ևայլն):

4) Շենքերի չափերը (ըստ փաստացի չափումների):

5) Շենքի (կամ նրա հիմքի տարածության) ծավալը (խորանարդը):

6) Գնահատման նորման վոր սահմանվում է տիպիկ շենքերի դնահատման համար:

7) Գնահատվող և տիպիկ շինության մեջ յեղած տարբերությունը (ոռուղիներով կամ տոկոսներով) յեթե տարբերություն կա:

8) Շինության դնահատումն առանց մաշվածության զեղչի (վերականգնման արժեքը):

9) Մաշվածության զեղչի տոկոսը:

10) Շենքի դնահատումն ըստ նրա իրական արժեքի (հաշվելով մաշվածությունը):

§ 36. Շենքի ծավալը կամ նրա հիմքի տարածությունը հաշվարկելու համար պետք է չափել պատերի յերկարությունը, լայնությունը և բարձրությունը: Շենքի յերկարությունը, լայնությունը և բարձրությունը պետք է վորոշել սույն համանգիքի § 18-ում նշված ձեզով:

Շենքի չափերը անպայման պետք է վորոշել չափելու միջոցով:

Արդելվում է շենքերի չափը վորոշել քայլերով, աչքի առաջ գոված և այլ միջոցներով:

Շենքերի չափերը ցույց է տրվում առահովագրական դնահատման թերթիկներում մետրերով նշառությամբ մինչև 0,1 մետրը:

Որինակ՝ Յեթե շենքն ունի 6,34 մետր յերկարություն, այդ դեպքում 0,04 մետրը գեն և զցվում և չափը հաշվվում է 6,3 մետր, իսկ յեթե յերկարությունը կազմում է 6,35 մետր, առանա ընդունվում է 6,4 մետր:

§ 37. Շենքի ծավալը պետք է վորոշել բազմապատկելով յերկարությունը լայնության և ստացված արտադրյալը՝ բարձրության վրա:

Որինակ՝ շենքը, վորն ունի 6,3 մետր յերկարություն, 5,0 մետր լայնություն և 2,8 մետր բարձրություն կազմում է 88 խոր. մետր (6,3 բաղմապատկած 5,0, բաղմապատկած 2,8= 88,2):

Առահովագրական դնահատման թերթիկներում խօսնաբուժությունը բանակը ցույց է տրվում ամբողջ միավորներով: Կենսության պակաս խորանարդ մետրի մասերը գեն են չափավում, իսկ կես և ամելին ընդունվում է վորպես ամբողջ խորանարդ մետր: Որինակ՝ 88,2 խոր. մետրն ընդունվում է վորպես 88, իսկ 88,7 խոր. մետրը՝ վորպես 89:

§ 38. Շենքի հիմքի տարածությունը (մակերեսային դնահատման նորմաները կիրառելիս) հաշվի յետ առնվում բազմապատկելով շինության յերկարությունը լայնության վրա: Առահովագրական դնահատման թերթիկներում քառակությունը մետրի բանակը ցույց է տրվում ամբողջ միավորներով: Որինակ՝ յեթե շենքի յերկարությունը կազմում է 9,3 մետր, իսկ լայնությունը 5,1 մետր, ապա նրա հիմքի տարածությունը պետք է զրանցել 47 քառ. մետր:

§ 39. Մշակված և համապատասխան կարգով հաստատված դնահատման նորմաներն առանց ուղղումների կարող են կիրառվել միմիայն տիպիկ շենքերի դնահատման համար:

§ 40. Յեթե դնահատվող շենքը հանդիսանում է տիպիկ և միաժամանակ նոր, այդ դեպքում նրա դնահատումը վերսպանվում

և՝ նրա ծավալը (խորանարդ) կամ նրա հիմքի տարածությունը բազմապատճելով համապատասխան դնահատման նորմայի վրա:

Որինակ՝ ա) Տվյալ տիպիկ չենքի համար 1 նոր մետրի դնահատման նորման կաղմում ե 15 ռուբլի:

Գնահատվող չենքը հանդիսանում ե նոր, ույսինքն՝ կառուցված ե վոչ ավելի, քան 2—5 տարի առաջ, նոր շինանյութերից, նրա խորանարդ չափն ե՝ 88 լ. մետր, դնահատումը կարտահայտվի գումարով (15·88)/1320 ռուբլի:

բ) Հյուսվածքաշեն, ծղնոտով ծածկված տիպիկ նոր սրահն ունի 50 քառ. մետր տարածությամբ հիմք, և քառ. մետրի համար 4 ռուբլի դնահատման նորմայի գեղքում, պահեստը կդնահատի (4·50)=200 ռուբլի:

§ 41. Նոր, վոչ տիպիկ չենքերի դնահատումը կատարվում է տիպիկ չենքերի գնահատման համար մշակված դնահատման նորմաները կիրառելու միջոցով, նրանց մեջ մտցնելով համապատասխան փոփոխություններ: Յեթե գնահատվող վոչ տիպիկ չենքն իր արժեքն ավելանալու տեսակետից տարբերվում է տիպիկ չենքից, այդ դեպքում դնահատման նորմաներով հաշվարկված դնահատմանը պետք ե ավելացնել չենքի այն ժամաների արժեքը, վորոնք բարձրացնում են ընդհանուր արժեքը: Որինակ՝ ավելացվում ե հոլանդական վառարանի, սըգաղի, կողմածքի և այլն՝ արժեքը յեթե այդ ելեմենտները չեն հանդիսանում տիպիկ չենքի բարկացուցիչ մասերը:

Յերբ գնահատվող վոչ տիպիկ չենքի արժեքը տարբերվում է տիպիկ չենքի արժեքից պակասելու իմաստով (չինանյութերի վորակի վատացում, վատորակ աշխատանք և այլն), այդ դեպքում դնահատման նորմաներով հաշվարկված դնահատումից պետք է հանել համապատասխան մասը:

Վոչ տիպիկ չենքի արժեքի տարբերության չափը նույն անվան տիպիկ չենքից կարող ե վորոշվել նաև տոկոսի ձևով: Այդ դեպքում դնահատման նորման բարձրացվում կամ պակասեցվում է այդ տոկոսով: Նման դեպքերում տվյալ վոչ տիպիկ չենքի դնահատման ժամանակ ընդունված դնահատման նորման (ավելացված կամ պակասացված) նշանակվում է առահավագրական դնահատման թերթիկի 10-րդ սյունյակում:

§ 42. Տիպիկ և վոչ տիպիկ այն չենքերի դնահատումը,

վարսնք նոր չեն, վորոշվում է ներկա հբահանգի §§ 40 և 41-ի համաձայն, սակայն հաշվելով նրանց մաշվածությունը (ամորակացիան): Յուրաքանչյուր տվյալ չենքի մաշվածության չափը ճշտորեն վորոշելով հանդիսանում է չենքի դնահատումը կառարող ապահովագրական տեսչի կարեվորագույն պարտականությունը:

Մաշվածության աստիճանը պետք է վորոշվի ապահովագրական տեսչի կողմից՝ յուրաքանչյուր չենքը մանրամասնորեն դննելու միջոցով: Եենքերը գնահատելիս՝ տեսուչը հաշվի առնելով յուրաքանչյուր չենքի հիմնական մասերի (տանիքի, պատերի, ներքին կառուցվածքի) մաշվածության աստիճանը, ինչպես նաև նոր ողտագործման ժամկետը վորոշում և մաշվածության գեղչի չափը: Մաշվածության գեղչի չափը պետք է վորոշել յուրաքանչյուր չենքի համար տոկոսով:

§ 43. Յուրաքանչյուր գնահատվող չենքի մաշվածության գեղչի չափը պետք է վորոշվի ապահովագրական տեսուչի կողմից շինության վայրում: Այդ գեղչը ապահովագրական տեսուչները պետք են նկատի ունենան, վոր չենքերի մաշվածության աստիճանը կախված է վոչ միայն նրա ողտագործման տարիների քանակից, այլ և չենքի տեսակից ու վորակից, նրա կառուցվածքից, ինամոքից, ընթացիկ վերանորոգման կանոնավորություններից, նրա գտնվելու վայրից և մյուս պատճառներից:

§ 44. Ապահովագրական գնահատման թերթիկում (13-րդ սյունյակ) յուրաքանչյուր չենքի իսկական արժեքը ցույց է տրվում մինչև 10 ռուբլին կորացումով, ընդ վորում 5 ռուբլին և ավելին ընդունվում է վորպես 10 ռուբլի, իսկ 5 ռուբլու պակաս գումարը գեն և զցվում:

§ 45. Գնահատման հետ կապված ամբողջ աշխատանքը, այսինքն՝ չենքերի չափի վորոշումը, նրանց նկարադրությունը, տիպիկ չինելու կամ նրանից տարբերելու մասին վորոշումը, մաշվածության չափի վորոշումը, գնահատման գումարի հաշվարկումը և ապահովագրական գնահատման թերթիկի առաջին որիաների կազմելով անդադար պետք է կատարվի չենքի վայրում:

§ 46. Եենքերի գնահատման աշխատանքը տվյալ պյուղիոր հրդի դյուղերում վերջացնելուց վոչ ուշ քան 3 որվա ընթացքում չենքերի գնահատման արդյունքների մասին ապահովագրական

աեսուչը պետք և զեկուցի գյուղխորհրդի նախադահությանը, վորը հաստառում և շենքերի գնահատումները:

§ 47. Շենքերի կատարած նոր գնահատումներն ուժի մեջ և մանում գյուղվորհուրդների կողմից հաստատվելու պահից:

Ապահովագրական վնասները փոխհատուցվում են յենելով նոր գնահատումներից, յեթե հրդեհը կամ այլ տարերածին աղետը տեղի յե ունեցել գնահատումը գյուղխորհրդի կողմից հաստատվելուց հետո:

Այս շենքերի գնահատումները, վորոնք կառուցվել են ալյալ գյուղում շենքի համատարած գնահատումից հետո, պետք և կատարել ժամանակին դործող գնահատումների նորմաներով:

§ 48. ԽՍՀՄ Պետակի գլխավոր վարչության կողմից սահմանված ձեր ապահովագրական գնահատման թերթիկները կազմվում են յուրաքանչյուր բակի (տնտեսության) համար յերկու որինակից: Ապահովագրական գնահատման թերթիկի առաջին որինակն անվատմառ լրացվում և շենքերի գնահատումը կատարելու ժամանակ: Թերթիկների յերկու որինակներըն ել ստորագրում և շենքերի գնահատումը կատարող ապահովագրական տեսուչը: Բացի այդ, ապահովագրական գընահատման թերթիկի առաջին որինակը ստորագրվում և նաև շենքի տիրոջ կամ նրան փոխարինող ոնտանիքի այն չափահան անդամի կողմից, վորը մասնակցել և շենքի գնահատմանը: Ապահովագրական գնահատման թերթիկներն այնպայման պետք է լրացնել բանաբով:

§ 49. Ապահովագրական գնահատման թերթիկների յերկուորդ որինակները, դյուղական խորհրդի կողմից հաստատվելուց անմիջեակն հետո, պետք և դուրս գրվեն ապահովագրական տեսուչի կողմից:

Ապահովագրական գնահատման թերթիկների յերկրորդ որինակներն ապահովագրվողներին պետք և հանձնվեն հարկացին գործակալների միջոցով (ստացականով): շենքերի գնահատումների արդյունքները հաստատվելուց հետո:

## Բ Ո Ղ Ո Փ Ն Ե Ր

§ 50. Շենքերի հաշվառման և գնահատման վերաբերյալ ապահովագրական տեսուչների սխալ գործողությունների եւ-

կառավամբ յեղած բողոքներն ապահովագրվողի կողմից արփում են ըրջանային Փինանսական բաժնի վարչին, շենքերի գնահատումը կատարելու որվանից՝ մեկ ամւվա ընթացքում:

Ծրջանային Փինանսական բաժնի վարչը պարտավոր են նոնության առնել յուրաքանչյուր ստացված բողոք, այդ ժամանել իր վորոշումը, բողոքն ստանալու որվանից վոչ ուշ, քան 20 որվա ընթացքում, իսկ Կարմիր բանակայինների բողոքների նկատմամբ՝ վոչ ուշ, քան 7 որվա ընթացքում և մեկ որվա ժամկետում իր վորոշման մասին հայտնել բողոքառույթին, գըրավոր ձևով:

§ 51. Շենքերի հաշվառման և գնահատման մեջ մասնակցող գյուղական խորհրդների ներկայացուցիչների սխալ գործողությունների վերաբերյալ բողոքները տրվում են գյուղական խորհրդի, իսկ գյուղական խորհրդի վոչ ճիշտ գործողությունների նկատմամբ՝ ըրջանային գործադիր կոմիտեյի նախադասկությանը:

ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԿՈՄԻՍԱՐ Ա. ԶԱՅԹԵԿ

ԽՍՀՄ ՊԵՏԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՎԱՀԱՆԻ



202

43. 896

Խոհակիր՝ Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն  
Սբուզիրէ՝ Զ բ ա ղ ա ց պ ո ն յ ա ն

695/6  
2/2  
695/6  
2/2

Դրամի լիազոր Ա.—2209.  
Դատիկը 900. Տիրաժ 2000

Գետիքատի տպարան, Յերևան Անդրեևի 65

